

5404

1909

059
0-79

1909

2010

059

4-72

ՈՄԱՆՑ

ՏԱՐԵՑՈՅՑ

529

6-61

ՀԵՂԻՆԱԿ

ԵՐՕՏ

059

0-79

1909

ՀԱՅ ԶԱԻՆՅԱԿԱՆ ՏԱՐԻՈՑ

ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆՔ 0703 ԵՒ ԴԻՊԱՅ

ԱԴՐԵՍԱՆԴՐԻԱ

Տալ. Խ. Փարզ. Գ. ՆԱԶՈՅՔԵՐԵԱՆ

Ո Մ Ա Ն Յ

Տ Ա Գ Ե Ց Շ Ա Յ Ա Յ



Կ Ա Թ Ո Ղ Ի Կ Ո Ս Ո Ւ Թ Ե Ա Ն

Դ Ա Հ Ե Ա Կ Ա Վ Ա Կ Ա Վ Ո Ւ Թ Ե Ա Ն

bh

h

Գ Ա Տ Ր Ի Ա Ր Ք Ո Ւ Թ Ե Ա Ն

Հ Ն Զ Ա Կ Ե Ա Ն Կ Ո Ւ Ս Ա Կ Ե Ո Ւ Թ Ե Ա Ն

bh

Ի Մ Ա Յ Ր Ա Գ Ո Յ Ն Տ Ի Ր Ա Յ Ո Ւ Թ Ե Ա Ն

Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ր Ի Վ Ա Յ Ժ Ո Ղ Ո Վ Ր Դ Ի Ւ Ն



(Այս օրացոյցը յատկապէս պատրաստուած է
այս չայ Տիտոսմերում համար որոնք իրենց
օրը կորսմցնելու վատազին եթարկուած են :)

282
73-81

Յ Ո Ւ Ն Վ Ա Ր

1909



ուաջին կաղանդ ազատութեան և սահմանադրութեան , Օր հանգստի և այցելութեանց : Անուշաբեր և գինեբեր հողմունք : Զինադադար յեղափոխական բանախոսութեանց :

Մեծաքանակ բաշխում սահմանադրական խաղաղիքներու , որոնց խորհրդաւոր և ակամայ հնարին ըլլու կը թուի նոյն ինքն Սուլթան Համիտ և Ասոնց մէջ կը գտնուին ազատութեան սուլիչներ , եղբայրութեան խարազաններ և հաւասարութեան տանկալափիշտիններ , ազգասիրութեան բամբ-թմբուկներ , Օսմանցիութեան չեփորներ , բարենորոգման ֆրարլտախներ , պաշտօնական տօլապներ , եւլն :

Ի պատիւ Պոլիս գտնուող 28562 Հայ հերոսներուն և դեր հերոսներուն՝ շքեղ ճաշ մը կը տրուի Զամլըճայի բարձունքր : 2000 է աւելի ազատաշունչ և ողելից բաժակաճառեր կը խօսուին ու կը կլուին :

Բէաքսիօնէրներու պարտգումիները փորձ մը կ'ը-
նեն տարւոյս թուականը 1899ի վերածելու, սակայն չի
յաջողիր, չնորհիւ վեհ. Սուլթանին : Այսու հանդերձ
կարող կ'ըլլան յետազիմական կեզրոններու մէջ տեղ
տեղ ժամացայները կեցնելու :

Հայերէն նոր, անկախ և ազատական օրկաններ
լոյս կը տեսնեն այս ամպամած օրը : Վահան Թէքէեան
կը սկսի հրատարակել «Կոկարդիլո» անունով յոռետես
շաբաթաթերթ մը . Յ. Ալիխար «Փիւրօն» անուամբ
փրանսախառն հայերէնով հանդէս մը զոր սապէս
կ'ուղղագրէ՝ համար տե՛ս . Բարսեղ Շահպաղ «Սամսան»
տիտղոսով ուժեղ և սարսող օրաթերթ մը կը հրատա-
րակէ ամէն տեսակ Փղշտացիներու, Ամազեկացիներու,
Սամարիացիներու և Եղեմացիներու դէմ :

10 Յունվար . Տեղատարափ բանախօսութեանց .
պերճախօսութեան սահմանքները կը բացուին, ողոզում
ունիցիրներու . կ'ըստի թէ 15000 ականջ մեռած և
26000 վիրաւորուած են :

Աբրահամ Այվազեան իր Սաղիմական վեշտամանն-
րորդ ուղեւորութեան կը պատրաստուի :

30 Յունվար . Գործադույներու մեծ գործունէու-
թիւն : Ընդհանուր գործադուլ բանախօսութեան ուն-
իլնդիրներու որոնց պահանջներն են . Ա. - Ճառերը
տուր վայրէեանէ տւելի զլուխ չպիտի ուռու են .
Բ. - Միհենոյն ճառերը չպիտի կրկնուին Պոլսոյ երե-
սունիվեց թաղերուն մէջ . Գ. - Թրքահայ լնզուն չպի-
տի բանաբարուի կուլտուրայի միրոյն, և ուրիշ այս
կարգի անգործադրելի պահանջներ :

Գործադուլ թատերատէր հասարակութեան : Իր
պահանջներուն զլիմաւորն է՝ Քաջն Վարդան, Վահան

Մամիկոնեան, Գայլ Վահան, Արշակ Բ. (Առաջինը
ինչպէս զիտէք՝ Զօպանեանն է) . Մանգուխտ Կուտ, Ար-
շակունեաց թագաւորութիւն, և այլ այս կառգի թար-
գոմաբանութիւններ, իր օրինաւոր տիրոջ՝ ազգային
պատմութեան գարձնել անդառնալիօրէն :

Գործադուլ ծափահարող ձեռքերու և ազգասիրա-
րար վճարող բսակներու : Պ. Պ. Կակորդիները, իրենց
կարգին, կը մերժեն այլեւս «կեցչ» գոչել առանց ա-
միս մը կարկարա ընելու :



ՓԵՏՐՎԱՐ

զգ. Սահմ. (ուկանող) Ռամի ուսակցու-
թիւնը գործի վրայ է, այսինքն՝ խօսքի վրայ . ինչ որ
բարեբախտաբար մեր կուսակցութեանց գործելակերպն
է : Ընկերք Վահան Թէքէեան և Սուրէն Պարթիւեան ,
շատ մը ընկերիկներով ճամրայ ելած են Պոլսէն , ճառի
սովէ առապող մէկ քանի գաւառներու ժողովրդին
սահմանուած խօսքերու անազին պաշտուի մը : Բազ-
մաթիւ բարեսէր ազգայինք իրենց լսած հին անպէտ
ճառերը հաւաքելով տուած են սոյն առաքեալներուն
կարօտելոց բաշխուելու համար :

Աղեքսանզրիու Պօղոսեան վարժարանի ծրա-
գիրը կը չարունակուի պատրաստուիլ : Այս առթիւ-
րերել արուած են Քէմպրիձի Օքսֆօրտի, Հայտել-
պէրկի, Բատովյայի, Թօքիոյի, Ցուրիխի, Քրիսթիա-
նիայի, Սթօքօլմի և Սօմալիանտի Համալսարաններուն

ծրագիրները : Այսուհետեւ աշակերտ կը շարունակեն հեգել ա չը քը՝ աչք : Տնօրէնին ամսականը երեք ոսկի աւելցած է , ոյս ասթիւ :

Առաջ ձի՞ն կը տեղայ մանաւանդ Հայոց զիխուն . վերջին աստիճան պազութիւն էր տիրէ ազգային զանազան կուսակցութեանց Մարմհներու միջնւ . զանազան թաղերու ու էջ Սահմանադրութենէն եաբը ծնած շատ մր ակումբներ , բնկեցիկ երախաներու պէս սառած են անտարերութեան սուրաէն : Փոթորիկը արմատախիլ ըրած է շատ մը ազգային երեսփոխաններու ակզրունքները , Յ. Ճանկիւլեանի և Տօքթ. Կ. Փաշանան Խանի քիթերը , Տօքթ. Ն. Տաղաւարեանի տաղաւարը և Լանկայի վարուգները :

Ցուրտին ասստիւթենէն շատ մը շահու ազբիւրներ սառած են , Շատ մը ճառախօսներու կոկորդներ կատաղօրէն կը հազան , և զո՞ւր . Սապահկիւլեան , Պարթիւեան և է. Աւանունի կը ժործեն իրենց պերճախօսութեան կրակովն ու շոգիով , ջեռուցանել ունկնդիրներու փատ հարած պլուիները :



ՄԱՐՏ



ոսկալի երկրաշարժ մը կը պատահի Եղիստասի մէջ . արժէթուզթերու և հոգերու գիները , շահադիտութենէ հարստացած շատ մը մարդերու երկնարեծ քիթերը , Սփինքները , Բուրգերը , ելն մեծաշառած կը կոտրին կ'իյնան : Գուտասային երեսփոխանա-

կան Ժողովները ամբողջովին կը կործանին . Նոյնիսկ անշարժ կալուտծները տեղերնուն կ'երերան , Հեղեղ մը կ'առնէ կը տանի Աղեքսանդրիոյ Առաջնորդարանին քննուելու վրայ եղող հաշիները , Տ. Մ. Թելեանի և Տ. Ն. Ամատունիի մամտուքները , և Տ. Յ. Շնորհքեանի զլիարկը որ կը յամառի հետեւիլ հեղեղէն աարուտօնաշուտետերներուն :

Մզակ դիզացի Երեմիա Կարապետօֆ , յուղումէն իսկակը կորսնցուցած , կը իսոստանայ մէկ միլիոն կոպէկ նուրիել Փաթակոնիայի կարօտ վայրենիներուն , և թէ Հնդկաստանի մէջ հւս նմանօրինակ երկրաշարժ մը աեղի ունենայ :

«Մանզումէ» սրտաշարժ կոչեր կ'ուղղէ մեծանուն բարերարին , որպէս զի այդ գումարը Հայաստանի սովետներուն արուե :

Մեծահոչակ անդղիացի զիտուն Մաք' Սութն կարծիք կը յայտնէ թէ երկրաշարժը յառաջ եկած է Ասրեւը և «Լուսաբեր» մոլորակին չափազանց մերձեցումէն : Զգիտցուիր ինչո՞ւ համար , այս յայտարարութեան վրայ , Լիւն Մկրտիչեան , Միքայէլ կիւրճեան , Վահան Մալէզիան , Երուանդ Օտեան , Տիրան Քէլէկեան և Տատուր անձնասպան հ'րլան Արշալոյսի մէկ տարուան հաւաքածոն կարգալով :

Նմանը շտեսնուած տեղատարափ անձրեւ մը կուզայ Կ. Պոլիս , Ազգային նորակերտ գործիչ Միհրան Հայկազն տեսնելով որ ճառերու սէզոնը անցած է , կ'րիին հովանոց ծախելու կը սկսի :

Անձրեւին ասստիւթենէն վերջապէս Սմբատ Բիւրամի մոստուռան կ'աւրուի և բռն գոյնը գուրս կոտտայ : Մանզումէ Բիւրամի շինած «Զիթունին վեց դիրը ձեռքը կուտայ : Լիւնցի հերոսը կեսարիա կերպայ ինքզինքը եօթներորդ անգամ ներկել տալու համար :

Պատերազմը կր շորուն ս'ուի Երուսաղէմի վանմին մէջ : Վարդապետները երկու բանակի բաժնուած զիրար կը բղքտեն : Արտօհամ Այզազեան որ վեշտասաներորդ անգամ բլլալով ուխտի եկած էր Վանքին քիւրին ու քասային . հայուարար ձախող միջամտութեան մը հետեւանքով փառաւոր ծեծ մը կ'ուտէ վարդապետական սրբակրօն ձեռքերէ ինամքով պատրաստուած :

Ազգ, Երեսփոխանական Ժողովը իրեւ միակ գարշման կ'որոշէ Վանքը ծախել, Երուանդ Օանան միջնորդ կ'ընտրուի այս մտօք կատարուելիքը բանակցութեանց : Այս ընտրութեան լուրը ամնելուն պէս, Պ. Եր. Արքաքէշխանլիւան հրաժարական կուտոյ խմբագրական տսպարէզէն :



Ա Պ Ր Ւ Լ



պրիլ 1—2 . Օր տղի ց բատ Վենետիկան Օրացոյցին, վասն վիճակաց Պատրիարքութեան Կիլիկիոյ, յարս ընկալեալ է : Աստուած շատ քաշել չի տայ :

Վերածնունդ և Զարթօնք Բնութեան և Մերկ ծառեր պարկեցտութեան զդացումէ մը դրդեալ աերեւներով կը ծածկուին : Ծիրք, ընձիւզք և բողբոջք ծայր կուտան : Հայ գրական բանջարանոցը նորէն կը կանաչազարդուի : Նորանոր կազամբներ երեւան կ'ելլան :

Միհրդատ Հայկազն հօգանացներու և ձառերու բարւոք պատրաստութեան մասին թէ իս ն ի ք ա կ ան երկ մը կը հրատարակէ : Ս. Բիւրատ «Անդքութեանէ խաղ բութին» անունով անձնազով ինքնայնուագրականմը կը հրատարակէ, որ մեծ ընդունելութիւն կը գտնայ խանդավառ մանրավաճառներուն քով : Մինաս Զերազ պատմական հսկայ հատոր մը «Մեծութիւն և Անկաւմի Յւրգ Յօդուածովն», անունով ի լոյս կ'ընծայէ : Ա. Զապահնեան 24 ամսուան «Անահիտները, ի մի պրատյարդակ, հրապարակ կը հանէ և ծախու կը զնէ արքակը 20 փարացի : Լեւոն Յարենց (Քիրիշեան) կը հրատարակէ բարական անտեսազիտութեան մասին իր մէկ ներհուն ասում մնամիրութիւնը : «Թէ ինչպէս զրամ շորթեւ է մեր հարս սաննրէն» . Տ. Գրիգոր Մելքոնեանի ձօնուած : Հմայեակ Արամեանց իր ձառերուն քրանսերէն թարգմանութիւնը կը հրատարակէ Cassse-tête ափազոսվ : Վահան Փափազեանին և ի լան երը զեռ չի ծաղկած կը թումին . ասոր վրայ ստեղղինի մշակութեան կ'ակաի : Մերութեան Պարսամեանի Քրի զ ան թէ մները երկրորդ անգամ բլլալով չեն տպագրուիր, ասոր վրայ ի շատ ուռւ կ'ներ անունով ուրիշ հատոր մը կ'արձակէ ի մեծ զայթակզութիւն բոլոր ներկայ քիթերուն : Լեւոն Շաթթըրեան «Ալքոլ իրրեւ սնունդ» անունով առաջարանական զիրք մը կը հրատարակէ Երուանդ Օականի մէկ յառաջարանովը պատուած :

Բիւրատ Քէմեան բն... իրաբանական խորունկ ուսումնամիրութիւն մը կը հրատարակէ «Ստամոքս և իւր սոնչութիւնք բնդ Օամ . Սահմանադրութիւն» անուածոր . որով կ'եզրակացնէ թէ պետութիւնը պարտաւոր է խմբագիրներուն անունդը հայթայթել : Ասում Եարձանեան բան մը չի հրատարակեր : Իսկ Վահան Քէպէսան պիտի հրատարակէ ուտանուարներու հատոր մը «Արմաւէք և Պանանք» եզրակացը անունով :



Արշակ Զօպանեան , Եւրոպայի մէջ Հալոց Դատք պաշտպանելէն և վաստկելէն ետքը , Ասիտ կ'անցնի ազգօգուտ որ զործը շարունակելու : Պուխորա կ'երթաց նախ և տաղ և Պուխորա աշխներուն կը ճանչնէ Նահապետ Քոչչակը , Նարեկացին և Խնքզինքը : Պուխորայի Էմիրը բան մը տալով թերանը կը կոցէ և գէոդի Սիամ ճամբռու կը գնէ պարզեւաբեր և ոսկեծզի «Անահիտ»ին տարարացզիրը , որ Բիկո Քէյեասի արուած պատուց հացկերոցին ի վեր անմիջիթար է : Վերափոխումն Ս. Աստուածածնի , և Երաւազէմի Վանքին գանձարանին մէջ պահուած թանկագին առնօթներուն : Տօն Սիմեոն Ահանտկեցիի և Յ. Ճանկիւկեան տեղդէկցիր :

Խառնակութիւն պաց և ոպպային խնդրոց :

Մայիս 25 . . . Առանց մեր հարուստներուն զբաղանէն հուս մը եղիլու և Պարանայ բարբառը կը հարցատանայ չափ մը զերծներ - ուսւա - ուսանայ իւսուլուր , զմաւարանունչ : Անըմբնելի բաժնեալք , որոնք իրենց մասքը կը դորձն համառներու ընդունի մէջ՝ ազգու բարեկառութեամբն կովկասահայ բնմբասացներու : բէտկցիտ , Փրակցիտ , Էզօլիցիտ , պրօլէտարիտ , տինդեցիտ , ազիտացիտ , պսիխօլօխիտ , տանկալախիտ , — տաքտիկա , տէխնիքա , մանա , կապիտալիտ , ապցուրտ , Փռզիտ , կրիտիքուկան , գոնկրես , պրօլետ , պրուշքիտ , խարուցքի , խարաչո՞ւ . . . բրավօ՞ :

Գալով Պլաթֆորմին , ճառարակ բառութենէ ելելով ազգույին մետառն ճառութիւն մը զարձած է :

Յ. Գուրգէն Ասկեղարու Հայերէնով բարբարոս բառերու այս արշաւանցին զէմ բոզոք բարձած ըլլալուն տէռոսի կ'ենթարկուի :



Ա Ա Յ Ի Ս

այիս 1 . — Շր. Գձ. ԻԱ. Օր Յինանց և Յիմարաց : Տօն Եղիշէ Թորոսեանի , Առաքելուն՝ Սապահէիլի , Պարթևեանի , Զաւարեանի և այլ ճառասպասուց :

Յատանի գործիչ Պարոն Օ. Բերանունի անկախ Ահամանալրական Արքեցողներու ընկերութիւն մը կը կազմէ «Եարայի Արկոր» անունով , որ ծախու կ'առնէ Վ. Թէքէւեանի տակաւին չի հրատարակուած «Եիրակ»ը , այդ անուամբ պաշտօնաթերթ մը հրատարակելու համար : Առջի օրէն , այս կուսակցութիւնը ահազին ընդունելութիւն կը գտնէ՝ անմիջապէս Սամաթիոյ , Եէնի Գարուի , Գում Գարուի , Լանկուի , Սուլու Մանասթրի , Սալմա Թօնրութի , Պալաթի , Խաս Գնդի , իւսկիւտարի ազստ իւմոզ երիտասարդութեան կողմէ : Ամէն տեղ էստրան . Գրինետուներ կը բացուին : Նարտկող կուսակցութեան գործօն անդամներէն և . Շամբրեան Իզմիր կը մեկնի քայլանդի համար : Ե Թօնեան իր «Կալվոց» թերթը անձնութրաբար . կը տրամադրէ անոր շաներու պաշտպ մնութեան և գաղափարներու ուրարտծումին : Այս նոր կազմակերպութեան գուած յաջողութիւնը ամբան մեծ է և ընդհանուր որ յօյ կայ թէ շատ չանցած իր մէջ պիտի ձուլուին բույր ընդդիմամարտ կուսակցութիւները :

Մայիս 10 . — Գիւտ Նշխարաց Օրմանեանի կոկորդ անցուցած դրամներուն :

Ուտիք է յայս մ եօթն և կի , եթէ զրատ տնիք :



Յ Ա Խ Ե Ւ Ս



օթաղին չերմութիւն :

Եղիշէ Թորոսեան , տափերուն չի զիմանալով , Փափոխութեան կը տարուի յ'Աղոբանիէ , ուրիշ բողոքախան պաշտօնազրեր կ'ուղղէ աջ ու ձախ :

Զերմ պիճարանութիւնը Օսմ . Խարճդարանի մէջ : Խուլթանու իր անձնական ծախքով պազ պազ օշարակ-ներ բաշխել կուտայ : Երեսիուսաններուն որոնք չեն հանգ որդիր տախոց : Բոււն վիճարանութեան մը մի-ջուրն՝ չտու մը խօսով , զլու ևներ կը պատախի և զար-ժանքով կը տեսնուի որ ամէնաւն ալ մէջը պարապ է եղեր : Այս տարօրինակ երեսոյթը բացատրելու համար ամէն աղջիրէ բազկացած Խառն Յանձնաժողով մը կը հազմուի : Որուն իրը բժիշկ ընկել արան , անդամ կը հարզուի Տօքթ . Ն. Տաղաւարեան , որուն զլուիր չեր պատաճ բարերազդաբար : Մեր ա՛թձախօս երեսիուսների Գրիգոր Զօնքան , այս միջադէպը մասին փաթ-թելով «Մենք զարտապ զլուիր մարզոց հետ չենք կրնոր նսմիլ առտեղք կը պօսաց և այդ երեսիուսաններուն ընմորութեանց բեկանումը . կը պահանջէ : Որոշումը կը յնտուծքներ մինչեւ քնիչ Յանձնաժողովի տեղեկադրին ընթերցումը : «Էս, եէմէք փոքթը կէլաի» կ'ըսին մէկ քանի երեսիուսաններ , և ասոր վրայ՝ Ժո-ղովը կը դրուի :

Ախորմաբեր հոգմունք . Բիլաֆի տեղատարափ . Կոօշափային քազցրութիւն :

Քէոս Ալիի աշքերը կը բացուին ի լոյս ձչմարտու-թեան և Մահմանտզրութիւնը ընդունելով՝ «Միութիւն» և Յառաջդիմութիւնն քօմիթէին անդամ կ'ըլլայ :

Ազգ . Երեսիուսանական ժողովը հանգիստաւոր , ար-տակարգ և լիազումար նիստ մը բնելով՝ «Միհան Չե-րազ» մարտանաւը Յօմ . Պետութեան կը նուիրէ . ա-նոր նաւապետ կարգելով Կովկասէն եկող «Ղեկավարու-սկզբունք» մը : Ցըթ . Եահրի իւան կը բազաքէ :

Յ Ա Խ Ե Ւ Ս



աքերը հետզրուէ կը սաստկաւուն , Ազեր-սանդրիոյ Պօղոսեան Վարժարանի ուսուցիչները և այլ-թութեան նշաններ ցոյց կուտան : Տնօրէնը Պ. Յանկոր Եահասէր և ուսուցիչ Ղեւոնդ «Ղազապույ» , զատ կը բանան Երուանք Մտեանի գէմ Վարժարանին համբաւը կամ մանաւանդ իրենց հայը պահպանելու համար : Դատարանին ծափերը հոգալու համար բռնի հանգա-նակութիւն կը կատարուի : Վարժապետներու և Վար-ժաւնքներու մէջ :

Գպրուական ծրագրին պատրատութիւնը առաջ կը տարուի Տօքթ . Ժամանչի հոգանաւորութիւնը : Տարձրազոյն կարգի աշխերաներու զազտնի քնիութիւնը կը կատարուի : Վարժանքով կը տեսնուի որ մե-ծամեծ յառաջդիմութիւններ ըլլած են :

Եղոք անսխալ կերպով կը հեղեն ձը ա ճա կը ու
տը կատ ճա կատ : Առոր վրայ Քաղաքական Փողովը
ճաշ մը կուտադ ուսուցչական մաքնին և անօրէնին
ամսականներ երեք ոսկի եւ ա կ'աւելցնէ :

Գահիրէիր աԱրշալոյած և Շեւելու թերթերը կը չուլ-
ուին և լուսաբեր-Արեւ օի հետ և մեծածաւագ թերթ մը
կը սկսի հրատաքակուիլ և լուսաբեր-Արեւ-Արշալոյա-
Վւելո անունով :

Ընթերցողներու առվ մը կը սորտանայ լճաջինջ ը-
նել և Եզրակաք և Տ. Քերէստէծնան, յուսահատութեան
վայրինանի մը ոէջ, կը փորչէ երակները բանակ իբ
թերթով :



Օ Գ Ա Ս Ա Ս



զեքսանդրիոյ Պօղոսեան վարժարանի ու-
սու-իշխերուն զատը տեղի է ունենաց երաւանդ Օտեանի
զիմ :

Երեք հարիւր ծնողքներ կուզան միայնէլ թէ՝ երեք
տորուան մէջ իրենց ազարւ հակայաքայլ յառաջդիմու-
թիւն ըրած են և թէ քերականին գրեթէ կէսը սորված
են : Յառաջդիմագոյն աշտիերով Առեան կը կանչուի
և առջը ու ան ակատա բառերը հեղելով տնօխալ կը
կարդայ : Բաւան ծափանարութիւններ առկի կ'ունենան
ջորդ Ժորժոչ յուղումէն և ուրախութենէն կը մորի-

Երուանդ Օտեան կը դատապարտուի վեց ամիս բան-
տարկութեան :

Վարչութիւնը անօրէնին ամսականը երեք ոսկի
եւ ա կ'աւելցնէ :

Քէօմիւրձի Պատուելի յուսահատութենէն ինքզինքը
հորը կը նետէ և զընիւր խոչոր քարի մը զազով քարը
կտոր կտոր կ'ըմալ :



ՄԵԶ. ՀՈՒ. ՆԵՐԵ. ԴԵԿ.



Նդհանութ ովելորութիւն միարանութեան :
Մեպտեմբեր, Հոկտեմբեր, Նոյեմբեր և Դեկտեմբեր
ամիսները, ինչպէս վիրը կը տեսնուի կը միանան
իրարու : Դաշնակցական կուսակցութիւնը կը միանայ
Հնչակեան կուսակցութեան, Ազգային սամկավար-
ազատական-սահմանադրական կուսակցութիւնը կը
միանայ «Միութիւն և Յառաջդիմութիւն Քօմիթէ»ին,
Առայ Պուռի կը միանայ Աօտայի և Կառպից ծովը
Մեւ ծովին :

Օսմանեան Խորհրդարանին ուջ վիճարանութիւն-
ները կը սկսին նույնու տպացական ըլլալ և շատ մը լուս
երեսփոխաններ կը սկսին կամաց կաւաց լիզու և լիլել :
Տեղ տեղ հրաշալիքներ կը պատահին, ինչ որ են-

Թագրել կուտայ թէ աշխարհի վախճանը համեմու
մօս է : Օրինակի համար՝ Հրատա Ասատար կը հրա-
տարկէ Յ. Պարսնեանի կենացքութիւնը . Յ. Միթիար
փարփառեա կը ծեռնադրուի . Յ. Արմազի Վանահայր կը
կարգուի , Վահան Թէքէնան կը արափ լոյս տծել իր
«Երբակ» զբական շարաթաթերթը . Տիկրան Զաւէն
իմուստալից յօդուածներ կը գրէ . Ազկասանզրիոյ Պո-
ղոսեան Վարժարանի ծրագիրը կը պատրաստուի , Ե-
րուսաղէմի վանքին ինդիրը կը լուծուի և եզիչէ թո-
րոսեանի խելքը զլուխը կուգայ :

Արտասահման մեացած շատ մը հերոսներ կը
պատրաստուին կ. Պոլիս երթալ . այս լուրը իմանալուի
Պոլիս զանուող հերօսները գող կ'ելլեն խորհելով թէ
իրենց «բաղուանները բաֆը պիտի ելլէ» և հերասական
բնդհանուր ժողով մը զումարելով . Յ. Ճանկիւլիանի
նախոպահութեան առէ . կ'ըջունն արտասահմանի
հերօսներուն . մմ պօքքօթ հրատարակիւ :

Եւ որդ մեր վերջացնելով մեր Տարեցացը ձեզի
կը ներկացացնենք 1910 տարի ին



Սփենքսի պէս խորհրդաւոր :

9 "07

0021947

2013

5404



